ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1.Անուն Ազգանուն

Սամվել Մարգարյան

2. Զբաղեցրած պաշտոնը

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները

Մոսկվա, Ռուսաստանի Դաշնություն, ապրիլի 17-19, 2018 թ.

4. Հրավիրող կողմը

Ռուսաստանի Դաշնության կառավարություն, Ռուսաստանի Դաշնության մարդու բարեկեցության և սպառողների իրավունքների պաշտպանության բնագավառում վերահսկողության դաշնային ծառայություն

5. Գործուղման նպատակը

Մասնակցություն Արևելյան Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում ՁԻԱՀ/ՄԻԱՎ հարցերին նվիրված վեցերորդ միջազգային համաժողովին (2018 թ. ապրիլի 18-20, Մոսկվա)

6. Քննարկված թեմաները

Համաժողովի ընթացքում քննարկվեցին Արևելյան Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի առաջնահերթ միջոցները և արդիական հարցերը, ճգնաժամային վիճակի կառավարումը, ռազմավարական մոտեցումները, ինչպես նաև ՁԻԱՀ/ՄԻԱՎ իրավիճակի ինչպես տարածաշրջանային, այնպես էլ համաշխարհային զարգացումները: Ներկայացվեցին ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի բուժման ժամանակակից ռազմավարությունները:

Համաժողովի նպատակն էր մշակել ազգային, տարածաշրջանային և գլոբալ մակարդակներով ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի խնդրի լուծմանն ուղղված համակարգային, միջոլորտային մոտեցմամբ տարածաշրջանային առաջարկություններ:

Համաժողովի ծրագիրը կազմված էր լիագումար նիստերից, զուգահեռ նստաշրջաններից ու սեմինարներից, որոնց մասնակցեց նաև Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պաշտոնական պատվիրակությունը, ինչպես նաև ոլորտի մասնագետներից և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներից բաղկացած մոտ երեսուն հոգանոց պատվիրակությունը: Հաստատված էին ծրագրի չորս հիմնական բաղադրիչներ՝ «Գիտություն և բժշկություն», «Արդյունավետ կանխարգելում», «Աջակցություն միջազգային զարգացմանը» և «Քաղաքացիական հասարակություն» խորագրերով: Վերջիններս ընդգրկել էին ՄԻԱՎ վարակին վերաբերվող բոլոր ոլորտները, ինչպես նաև հնարավորություն էին ընձեռնել համաժողովի բոլոր մասնակիցներին բազմաթիվ հարցերի ու խնդիրների քննարկման, նոր գիտելիքների և փորձի փոխանակման:

Հայաստանի Հանրապետության պատվիրակության անդամները ակտիվորեն մասնակցեցին համաժողովի նիստերին՝ զեկույցներով, ինչպես նաև զուգահեռ ընթացող նստաշրջաններին և սեմինարներին՝ ներկայացնելով իրենց թեզերը, հանդես գալով ելույթներով և պաստառներով:

7.Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Համաժողովի հանդիսավոր բացմանը ելույթ ունեցան Ռուսասռանի Դաշնության փոխվարչապետ Օ.Գոլոդեցը, ՌԴ առողջապահության նախարարի տեղակալ Ս.Կրայեվոյը, ՌԴ մարդու բարեկեցության և սպառողների իրավունքների պաշտպանության բնագավառում վերահսկողության դաշնային ծառայության ղեկավար Ա.Պոպովան, ՌԴ արտաքին գործերի նախարարի տեղակալը, ՄԱԿ-ի գլխավոր տնօրենի տեղակալ, ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ ծրագրի գործադիր տնօրեն Մ.Սեդիբեն, Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության եվրոպական տարածաշրջանի գրասենյակի ներկայացուցիչը, ինչպես նաև ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց միությունների ղեկավարներ և ներկայացուցիչներ:

ՄԱԿ-ի գլխավոր տնօրենի տեղակալ, ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ ծրագրի գործադիր տնօրեն Մ.Սեդիբեն բարձր գնահատեց ՄԻԱՎ/ՁԻԱՀ դեմ պայքարի, կանխարգելման և մինչև 2030 թվականը հիվանդության վերացման գործում

Հայաստանի ջանքերը: Իր ելույթում նա հատուկ նշեց, որ Հայաստանում մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցման վերացումը տարածաշրջանային մեծ ձեռքբերում է և օրնակ մյուս երկրների համար: Նա նաև հույս հայտնեց, որ Հայաստանը առաջիններից մեկը կհասնի «90-90-90» թիրախներին, 2020 թվականին:

Համաժողովի բացման արարողության ժամանակ հանդես եմ եկել ողջույնի խոսքով՝ նշելով, որ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի և կանխարգելման ոլորտում Հայաստանը հաջողությամբ համագործակցում է Գլոբալ հիմնադրամի, ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի միացյալ ծրագրի հետ, Ռուսաստանի Դաշնության աջակցությամբ իրականացնում է լայնածավալ ծրագիր: Ընդգծեցի երկրների տարածաշրջանային և գլոբալ մակարդակով համագործակցության կարևորությունը:

Համաժողովի երկրորդ օրը՝ ապրիլի 19-ին, լիագումար նիստի ժամանակ հանդես եմ եկել «ՄԻԱՎ վարակի համաճարակին ազգային հակազդումը» զեկույցով՝ ներկայացնելով ՄԻԱՎ դեմ պայքարի գործում Հայաստանի փորձը, ձեռքբերումները: Անդրադարձ եմ կատարել նաև ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի ոլորտում Հայաստանում առկա մարտահրավերներին և ներկայացրել դրանց հաղթահարման հնարավոր ուղիները:

Նույն օրը ՌԴ մարդու բարեկեցության և սպառողների իրավունքների պաշտպանության բնագավառում վերահսկողության դաշնային ծառայության, ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ միացյալ ծրագրի, Ռոսպոտրեբնադզորի համաճարակաբանության կենտրոնական ինստիտուտի և ՌԴ տեխնիկական աջակցության ծրագրի այլ շահառու երկրների ներկայացուցիչների հետ մասնակցել եմ այդ ծրագրի երրորդ փուլի ծրագրային հայտերը կազմելու նախապատրաստական միջոցառումներին նվիրված աշխատանքային հանդիպմանը:

8. Հանդիպման կամ նիստերի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Համաժողովի փակման արարողության ժամանակ, որը տեղի է ունեցել ապրիլի 20-ին, որոշվել է մեկ շաբաթվա ընթացքում մասնակիցների շրջանում շրջանառել համաժողովի բանաձևը՝ դիտողությունների և առաջարկությունների ստացման համար:

9. Առաջարկությունները

Համաժողովի ընթացքում հնչել են բազմաթիվ առաջարկներ՝ ուղղված Կենտրոնական Ասիայում և Արևելյան Եվրոպայում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, վիրուսային հեպատիտների, տուբերկուլոզի դեմ պայքարի գործում առավել համախմբված և համաձայնեցված մոտեցում ցուցաբերելուն:

10. Գործուղվող

Սամվել Մարգարյան

11. Ստորագրությունը, ամսաթիվը

07.05.2018 թ.